



48. ԲԱՐԵՆԻՒՅՃ ՏՂԻ ԽԵՉԱԹԸ

Ժամանակով մե ավսկատ մարթ ու կնիկ են հըլնում: Ըստոնք մե տղա ունին, հուրիչ բան չունին: Էս խեխճերի չըսիբուլթունն հիրանցը բոլ չէր, էկավ, որ էս մարթի էրկու անկն էլ քոռցավ:

Որ հընգավ տեղաչոր, կանչեց տղին ու ասավ.—Բալա՛ ջան, տենում ես իմ օրը: Չանքի հիմի էթում ի աշխատանք, ձեռս բռնում էր, չատեն-քչեն մե բան բերում ի, յոլա ինք էթում: Հիմի անկերս քոռցան, բան բերելու տեղը հիմի ընձի ա հարգավոր արբուստ, էլ ձեռս չի բռնում: Աստվորի տակը մե դեղ կա իմ անկերի խըմար, թե բերիր, անկերս կըլավնա, ձեռս կըբռնա, էլի կաշխատեմ, թե չըբերիր, հեն ա մահս տենամ, հավելի լավ ա:

Տղեն, որ խոր ասածը լսաց, սիրտը մոմոաց, ասավ.—Ափո՛, դեղն էլ ասա՛, բերելու հնարն էլ ասա՛, քարի տակ էլ որ հըլնի, խանեմ բերեմ, քո անկերը լավըցնեմ:

Խերն ասավ.—Իմ անկերի դեղը համ հեշտ ա բերիլը, համ էլ մոտ ա, որ բերես, նեղուլթուն չես քաշի:

Տղեն ասավ.—Ափո՛, կըբերեմ, դու տե՛ղն ասա:

Խերը սրտպնդավ, ասավ.—Դե որ կըբերես, վեցու թոռը, հէսօր չափաթ օր ա: Ցամաքաբերթի հատեչը մե ջոչ քար կա: Ամմեն չափաթ օրը մե կարմիր ձուկ ա գալում ըտե, արևի տակը պարկում: Հիմի ձուկն ընդե յա: Գնա թոռը քի՛ց, բռնա՛, լողաթաղանթներից մեկը կդրա բե՛, քսեմ անկերիս, անկերս կըլավանան: Աչնան օրեր են, կարող ա ցրտերն հընգնեն, ձուկն էլ չըգա, հենց հիմի գնա՛:

Տղեն թոռն առավ գնաց խոր ասած տեղը, տեսավ ձուկը պարկուկ ա: Ուզեց թոռը քցա ու բռնա, մեկ էլ մտածեց. «Մե լավ թամաչա անեմ, ետո քցեմ, կարող ա փախնի, անկիս կարոտ մնա»: Նստավ քարի վրեն ու ըչկը ձկանն ա: Շատ հիշկաց հինքը ձկանը, ձուկը՝ հիրանը: Բերանը մացեր էր բաց, ձուկը էնքան խորոտ էր: Ձեռը չըգնաց, որ ձկանը բռնա, լողաթաղանթը կդրա: Մտածեց. «Լողաթաղանթը կդրեմ, ձուկը կըսատկի, իմ ձեռը չի էթա, որ մեր ծովի մեչը մե խատ էտ տեսակ ձուկ հըլնի, էն էլ ես սպանեմ: Խեր ա, քոռ ա, քոռ, ես կաշխատեմ, թո հինքը նստի տունն, ուտա:

է՛հ, —ասա՛վ, —ձո՛ւկ, գնա աբրի՛, դու էլ Աստծու ստեղծած ես, չեզի չեմ սպանի, որ իմ խորը լավըցնեմ: Աստված ընդրա անկի լուսն ա առե, դու ի՞նչ մեղավոր ես, որ զոհվես»:

էս որ ասա՛վ, ձուկը գլոխ տվեց ու եռացա՛վ:

Տղեն էկա՛վ տունը, խորն ասա՛վ, որ աչուն ա, ձուկը չէր էկե:

Ո՛րերը շատ նեղացա՛վ ու տղին ասա՛վ. —Ես ըստե քոռ, մայիֆ վեր հընգնեմ, դու մե ձուկ կամ չըտենաս, որ իմ անկերը լավընան, գնա՛, էլ իմ տունը մի՛ մաց, ես չեմ ուզում քո աշխատանքն ուտեմ: Անոթի էլ որ մեռնեմ, էլի քո բերածին մատ չեմ տա: Որ տնից էլ ա էթաս, ես ընձի ջուրը կըքցեմ, հոքուս պարտական կըմնաս:

Տղեն շատ մտածեց, ետո հեկա՛վ, մորն ասա՛վ. —Ադե՛, էթում եմ:

Մերը որ տեսա՛վ տղեն էթում ա, բերեց իրեք խնձոր տվեց, տղին էլ օրչնեց, խրատ տվեց, վերչը ասա՛վ. —էս խնձորները մի-նակ չուտես: Ճամբին, որ չեզի հընգեր պատահի, խնձորներից մեկը կըխանես կըտաս պատահողին, կասես. «Առ ճիսա, ուտենք, համ էլ մեչու նստենք դինջնանք: Էնի խնձորը կըճիսա: Թե շատը հիրանը վերցուց, խետը հընգերութուն չանես, կըջոկվես, թե շատը չեզի տվեց, խետը կէթաս, ինչ որ ասա, կըլսաս, էն մացած խնձորներն էլ էտ ձևով կըճիսեք կուտեք: Ոնչ մե խնձոր դու չես ճիսի»:

Տղեն բռնեց քաղաքի ճամբեն, որ էթա ֆայլութուն անա, գլոխը պախա: Գնաց խասա՛վ Ֆանթալ, տեսա՛վ մե հիրան նման տղա, չարխները խանե դրե կողը, ձառի տակը նստեր ա: Հինքն հիրան մտածեց, որ կարող ա ձերեան էթող ա, խետը ծանոթնա, մետեղ կէթան: Գնաց բարե տվեց, նստողը բարեն առա՛վ, ծանոթցան, խոսացին, տղեն տեսա՛վ, որ էս էլ ա էթում ֆայլութուն անելու:

Ո՛րանեց ջերի խնձորներից մեկը, տվեց էտ տղին, ասա՛վ. —Առ ճիսա, ուտենք, հըլնենք էթանք:

էս նստողը ջերից դանակը խանեց, խնձորը ճիսեց, ջուչը վերցուց հիրանը, պստի կտորը տվեց խնձորի տիրոջը:

էս տղեն մտկի մեչը ասա՛վ. «Ձէ՛, էսի իմ հընգերը չի»:

էն տղեն չարխները խաքա՛վ, ասա՛վ. —Հեի էթանք:

էս տղեն ասա՛վ. —Դու գնա՛, ես միտկս փոխի, բզի ետ դառնամ տունը:

էն խնձոր ճիսողը գնաց, եռացա՛վ, էրկու սՀաթ ետո էսի ճամբեն չարունակեց: Գնաց, գնաց, խասա՛վ մե մարթի: էս մարթն էլ խնձորի շատը հիրանը վերցուց: Մե մահանն բռնեց, ըտուց էլ ջոկվա՛վ:

Որ ըտուց ջոկվա՛վ, էկա՛վ մե ծեր մարթ, ասա՛վ. —Բալա՛ ջան, հո՛ւր ես էթում:

Տղեն ասա՛վ. —Պապե՛, չմսիք տղա եմ, էթում եմ ձերեան աշխատելու:

էս բիձեն ասավ, որ Հինքն էլ ա էթում աշխատելու: Տղի խետ խոսալով գացին, Հիչան Զաղի դուրանը, տղեն ջերից մե խնձորը խանեց, զաթե էտ մեկն էր մացե, տվեց բիձին, ասավ, որ բիձեն ճիսա, ուտեն:

Բիձեն ասավ.—Բալա', քո խնձորն ա, դո՛ւ ճիսա, իշքան ընձի տալում ես, տո՛ւր:

Տղեն ասավ, որ Հինքը պատիկ ա, իրավունքը ջոչին ա: Բիձեն վերցուց խնձորը, դանակը խանեց կլպեց, կլեփը Հինքը ճերավ, խնձորը տվեց տղին:

Տղեն ասավ.—Բիձա', էտ ի՞նչ արիր, չեզի խնձոր չըվերցրիր:

Բիձեն ասավ.—Բալա' ջան, դու ջահել ես, օրը չոք ա, ծարավի չես դիմանա, ես ծեր մարթ եմ, նեղութուն չատ եմ տեսե, կըղիմանամ: Ճամբեն էլ հերկեն ա, չանքի էլլար հըլա ութթը-իննը վերս կա:

Տղեն տեսավ, որ էսի Հիրա մոր ասած մարթն ա, խետը հընգե-րացավ ու գացին:

Ճամբեն խոսալով գացին ու պայման կապին, որ ինչ աշխատեն, խալալ ճիսեն: Փող աշխատեն, մե մանեթ՝ մեկին, մե մանեթ՝ մեկին, չոր աշխատեն, խալալ ճիսեն, խող աշխատեն, խալալ ճիսեն: Հըմա, որ էսենց բան էլ պատահի, որ մե խատ հըլնի, թրով յա բալթով մեչտեղից էրկու կտոր անեն, փուճ քցեն, վիրն ինչ հընգնի, հընգնի:

Գացին քաղաքը, մե փողրաթ գործ վերցին, հիրկուն էր, քնան, որ հառավոտ հըլնեն գործը կատարեն: Հառավոտ հելան տեսան՝ գործը կատարուկ ա: Սազենն էկավ, հազար մանեթ ին խոսացե, տեսավ՝ կատարուկ ա, փողը տվեց: Գացին մե տեղ, տեսան՝ ժողովուրթը չայի կրաղով վազնում ա, տեսան՝ մարթ ա հընգե ջուրը, բիձեն թռավ ջուրը, հընգածին ազատեց, բերին հազար մանեթ պարքե տվին:

Փող էրկու հազար մանեթ ունին, էլ չին վախենում, գացին մե տուն, փող տվին, ըստոնցը յորդան-դոշակ քցին, լավ ճաշ պաղ-րաստեցին, ճերան, խման, քնան:

Հառավոտ հելան վեր, որ էթան աշխատանքի, տեսան, որ ժողովրթի մեչ խոսակցութուն կա, հըմմեն ասում են.—Ափսոս, ափսոս էն տղին, ոնց գնաց հիրանը մահի տվեց:

Ըստոնք, որ լսացին, ետաքրքրվան, խառցրին, հիմացան, որ էս քաղաքի թաքավորի ախճկան ինչ մարթ, որ առնում ա, հառավոտ հըլնում են, տենում են մեռեր ա: Հէսօր էլ մե լավ տղա, գլխից ձեռ ա վերցրած հըլնում, էթում առնում ա, էլի մեռեր ա, ժողովուրթն ըտու խըմար ա ախ-վախ անում:

էս բիձեն տղին ասաւ.—Արի էթանք, ես չեզի նշանեմ թաքավորի ախճկա խետ:

Տղեն ասաւ.—Ոնց որ ուզում ես, էնե՛նց արա, ես՝ պատիկ, դու՝ ջոշ, խոսկը քոնն ա:

Էրկսով գացին նստան թաքավորի էլշու դաշին:

Թաքավորը տեսաւ, որ մե բիձա մարթ ու մե ջահել տղա էկե, նստեր են էլշու դաշին, մարթ հղրկեց կանչին:

—Ի՞նչ եք ուզում, բարի՛ մարթ,—ասաւ թաքավորը,—Թե աբրուստ չունես, հրամայեմ, փող տան, գնա աբրի՛:

—Թաքավորն աբրած կենա,—ասաւ ծերունին,—էս իմ տղեն ա, ես էկեր եմ, որ քո ախճիկն ուզեմ իմ տղին:

Թաքավորն ախ քաշեց ու ասաւ.—Ծերունի՛, իմ ախճիկն անբախտ ա, էս էլ քանի տղա առաւ, առաւոտ տենում ենք տղեն մեռուկ: Ըսկի պաճառն էլ չենք հիմանում: Քո տղեն ափսոս ա, կըմեռնի: Հէն ա հէսօրվա մեռուկ տղի ջանդակն էլ օթաղը դրուկ ա, չըլն չեն տարե:

Թաքավորն հիրանն ասաւ, բիձեն՝ հիրանը. թե՛ բզի ուզեմ, բզի ուզեմ: Թաքավորը կանչեց ախճկան, խառցուց, ախճիկը համաձայնվաւ: Բերին էս տղին ու թաքավորի ախճկան նշանին, հրմա համաձայնվան, որ խառնիսը քառասուն օրից ետո անեն, էս մարթին թաղեն, քառասունքը կատարեն, ամոթ ա, որ մարթին չըն չեն թաղե, կնիկը մարթի էթա, ժողովուրթն ի՞նչ կասա:

Քառասուն օր ետո խառնիս արին, պսակին:

Որ խառնիսը վերջացաւ, բիձեն տղին ասաւ.—Հէսօր ես էթամ խառսի մօտը, ես բիձա մարթ եմ, թե թըլըսմ ա, թո իմ գլխին կատարվի, դու ջահել ես, ափսոս ես:

Տղեն ասաւ.—Ձէ՛, հայրի՛կ, ինչ հըլնում ա, հըլնի, ես կէթամ:

—Դո՛ւ ջիդաս, բալա՛,—ասաւ բիձեն,—հրմա մե պայման եմ դնում, որ էս քչեր ես մնամ ձեր քնած օթաղը, պահակ կայնեմ, տենամ՝ էտ ինչ բան ա, կարող ա բտե դե յա սատան կա:

Տղեն համաձայնվաւ ու բիձեն էլ գնաց, իրեքով մացին էտ օթաղը: Բիձեն մե դանակ բռներ էր ձեռը, բազրաստ կայներ էր:

Ջահելները քնան: Գիշերվա մե վախտը բիձեն մեկ էլ տեսաւ, հեսա ախճկա բերնից մե օց գլխը խանեց, դես-դեն հիշկաց ու ուզեց տղին կծա: Ձեռ քցեց, օցի վզից բռնեց, քաշեց, որ խանա, օցը դուս չէկաւ, հավելի ներս քաշվաւ: Բիձեն տեսաւ, որ կարող ա օցը ձեռից պրծնի, դանակը քցեց, օցի գլխը կղրեց: Օցի ջանդակը գնաց ախճկա փորը, ախճկա բերանը արնոտաւ: Բիձեն էրկսին էլ զարթնցուց, ջուր բերին, ախճկա գլխ-մլխը լվացին, էլի պարկան քնան:

Հառավոտ, որ լուսը բացվավ, Թաքավորին անկի լուս տարան, թե՛ անկտ լուս, փեսետ սաղ ա:

Թաքավորն էլ շատ ուրիշացավ, ժողովուրթն էլ շատ ուրիշացավ, որ երիտասարթները մահից կազատվեն, էլ իզուր տեղը Թաքավորի փեսա Հըլնելու խըմար չեն մեռնի:

Մի քանի օր ըստե մնալուց ետո բիձեն Թաքավորին ասավ, որ խառսը տանում ա:

Թաքավորն ասավ.— Խնամի՛, իմ պալատը ձեր իրավունքին ա, աբրե՛ք, էլ հո՞ւր եք էթում:

Բիձեն ասավ, որ հիրա տղին տնփեսա չի տալում, խառսը բղի տանա, որ հիրա պառավն էլ տենա, ուրխնա:

— Դուք ջիդաք, — ասում ա Թաքավորը, — իրավունքը ձերն ա, իմալ լավ ա, էնենց արեք, ես խոսկ չունեմ ասելու:

Ճամբի պաղրաստութուն տեսան: Թաքավորն ախճկան էնքան աբրանք ու ոսկի տվեց, որ էլ հանիվ չըկար:

Ըստոնք քաղաքից դուս էկան ու ջեղի ճամբեն բռնին:

Որ էկան ճամբի ճեսը, բիձեն տղին ասավ.— Դե բեր, ինչ որ աշխատեր ենք, ճիսենք:

Տղեն ասավ.— Քո իրավունքն ա, ոնց որ ուզում ես, արա՛:

Բերին աբրանքը ճիսին: Մինչև անքամ ախճկա ջհեղի չորերն էլ ճիսին: Ախճիկը մացեր էր չիվար, մտկի մեջն ասում էր. «էս ի՞նչ անխիխճ բիձա յա, կնգա չորերն էլ ա ճիսում»:

Մե դերա հավլցավ, բիձեն դանակը քաչեց մեջտեղից ճիսեց:

Աբրանքը ճիսելուց ետո բիձեն ասավ.— Մնաց, որ խառսը ճիսենք: Բե ճիսենք:

Տղեն, որ խառսին ճիսելը լսաց, թուքը բերնի մեջը չորցավ:

— Ա՛յ բիձա, իչքան աբրանք ունենք, հըմմեն չեղի, մինակ խառսը ընձի, խառսը ո՞նց ճիսենք:

Բիձեն ասավ.— Ընձի քո աբրանքը պետկը չի, ոնց որ խոսացեր ենք, էնենց անենք, դուզութունը լավ բան ա, խոսկը խոսկ ա:

Տղեն ասավ.— Բիձա՛, խառսն էլ չեղի, աբրանքն էլ չեղի, ես բան չեմ ուզում, մինակ թե խառսին ձեռ չըտանք:

Բիձեն ասում ա՛ ճիսենք, տղեն չի համաձայնվում ա:

Վերչը բիձեն քաչեց թուրը, տարավ, բերեց, որ խառսի գլոխը թոցու: Խառսը վախից թուլցավ, հընգավ:

Խառսը որ հընգավ, օցի ջանդակը բերնից դուս էկավ: Խառսին բանցրցրին, ջանդակը էկավ, հիրար վրա կոլոնվավ:

Խառսին ուշկի բերին, աշկերը բացեց, բիձեն սիրտ տվեց, ասավ.— էլ մի՛ վախեցի, չենք ճիսի:

Տղեն ասավ.— Բիձա՛, էն օցի ջանդակը ընձի, խառսը չեղի:

Բիձենն ասավ.—Օցի ջանդակը խորա՛, էս խառսն էլ, արբանքն էլ քոնն ա, տա՛ր, վայելա՛, խալալ ա: Ես էն ձուկն եմ, որ չուզեցիր բռնես, դու բարեխիսճ տղա ես: Ես քո լավության տկից դուս էկա:

Բիձենն ջերից խանեց մե դեղ, էտ էլ տվեց տղին, ասավ.—էս դեղն էլ տա՛ր, քսա՛ խորտ անկերին, անկերը կըլավնան:

Տվեց, թե չէ, մեկ էլ տեսան՝ բիձենն չըկա:

Նոր էս տղեն ուրախ-ուրախ էկավ տունը, խոր անկերը լավը-ցուց, երջանիկ արբան: Ըստե են ասե, որ լավութունը չի կորի, մե օր քո արած լավութունը կըգա քո հառեջը:

Էսի խեչած չի, առակ ա, հըմա որ շատ հերկեն ա, արեր են խեչած:

